ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

26 նոյեմբերի 2021 թվականի թիվ 360- Ա

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշումը.

Որոշում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզի համայնքների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների հայտերի փաթեթների ուսումնասիրման և ծրագրերի իրականացման ընթացքի մշտադիտարկման նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝
Ն. Ղուշչյան - ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ

Անդամներ՝
Ա. Գալստյան - ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ,
Ա.Բաբլումյան - ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետի պարտականությունները կատարող,
Մ. Մելքումյան - քաղաքաշինության վարչության պետի պարտականությունները կատարող,
Գ. Հարությունյան-զարգացման ծրագրերի, գբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ,
Դիլիջան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/,
Իջևան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/,
Նոյեմբերյան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/,
Բերդ համայնքի ղեկավար /համաձայնությամբ/:

2. Սուբվենցիաների հայտերի փաթեթները ստանալուց հետո ստուգել ծրագրերի իրականացման իրագործելիության և ֆինանսական ցուցանիշների համապատասխանությունը՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգի դրույթներին:
3. Սուբվենցիաների հայտերը քննարկելուց և ամփոփելուց հետո փաթեթները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն /պատասխանատու՝ Գ. Հարությունյան/:
4. Ծրագրերի ընթացքի վերաբերյալ պարբերաբար իրականացնել մշտադիտարկում:
5. Մշտադիտարկման արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետին՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը /պատասխանատու՝ Գ. Հարությունյան/:
6. Ծրագրերի լուսաբանման համար պատասխանատու նշանակել մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

29.11.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**26 նոյեմբերի 2021թ.**
**ք. Իջևան**